ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՔՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 17217
Ք.ԵՐԵՎԱՆ ՑԱՆ ՌԱՑՆԻՍԻ 5/28
Հեռ. 093 33 06 19 055 24 36 38
E-mail: hgmsn@mail.ru

*Հաստատում եմ՝*

*ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ Անհատական ձեռնարկության*

*Տնօրեն՝ ____ Ս. Մուրադյան*

*27 09 / 2023 թ.*

*ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ 17217*

# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի փողոցում Երևանի քաղաքապետարանի կողմից ոռոգման նպատակով խորքային հորի կառուցման աշխատանքների նախագծի և նախահաշվի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Նախագծող՝ ,,ԱՐԽԻԹՈՒԼՍ ,, ՍՊԸ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզեի փողոցում Երևանի քաղաքապետարանի կողմից ոռոգման նպատակով խորքային հորի կառուցման աշխատանքների նախագծի և նախահաշվի փորձաքննությունը իրականացվում է Երևանի քաղաքապետարանի հետ կնքված թիվ ԵՔ – ԳՅԾՁԲ – 23/92 ծածկագրով պայմանագրի համաձայն:

Նախագծի և նախահաշվի համար որպես հիմք են հանդիսանում.

1. Նախագծման պայմանագիրը
2. Տեղանքի տեղադիրքային քարտեզը
3. Հիդրոերկրաբանական տեղեկատվությունը տրված ՀՀ ՇՄՆ Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի կողմից
4. Տեխնիկական առաջադրանքը
5. Ջրամատակարարումով ապահովելու ինժեներա-տեխնիկական պայմանները

**Նախագծի կազմը**

Փորձաքննության ներկայացված նախագիծը բաղկացած է.

**Գիրք 1** - ***Բացատրագիր***, որտեղ ներկայացված են աշխատանքների կատարման համառոտ նկարագրերը: Բերված են տարածքի հիդրոերկրաբանական տվյալները: Տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտում: Բերված են նաև շինաշխատանքների կազմակերպման, ժամանակավոր շինությունների տեղադրման և օգտագործվող շինարարական մեքենաների և մեխանիզմների տվյալները, շրջակա միջավայրի պահպանության և աշխատանքի անվտանգության նախազգուշական միջոցառումները:Որոշվել է շինարարության նորմատիվ ժամկետը ըստ ՇՆևԿ 1.04.03 – 85, որը կազմել է 30 օր:

**Գիրք 2** - **Աշխատանքային գծագրեր,** որտեղ ներկայացված են տեղանքի տեղադիրքը, խորքային հորի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը և կառուցվածքը, խորքային հորի կտրվածքը և հեռացնող խողովակաշարի երկայնական կտրվածքն ու հատակագիծը: Բերված են օդահան և փականային հորերի կառուցվածքները: Բերված են բոլոր աշխատանքների համար ծանոթությունները և աշխատանքային ծավալները: Նախատեսված է հորերի տարածքները ցանկապատել մետաղական ցանցերով, որոնց համար բերված է կառուցվածքի գծագրերն ու ծավալները:

**Գիրք 3** - **Աշխատանքային ծավալներ,** որտեղ ներկայացված են նախատեսվող աշխատանքների ծավալները ֆինանսական առաջարկներ ներկայացնելու համար:

**Գիրք 4** - **Նախահաշիվը** կազմված է կառավարության 23 հունիսի 2011թ. թիվ 879-Ն որոշման համապատասխան,շին.աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է ՀՀ Քաղշին Նախարարության 03. 04. 2008թ. թիվ 05 հրամանով:
Նյութերի արժեքը հաշվարկվել է ՀՀ ՖՆ 07.2023 թ. ինֆորմացիոն տեղեկագրի հիման վրա: Աշխատավարձերի և մեքենաների շահագործման ծախսերը հաշվարկված են 1984 թ. նորմատիվային ծախսերի հիման վրա՝ կիրառելով համապատասխան հաշվարկային ինդեքսները և գործակիցները:
Համաշինարարական աշխատանքների համար հաշվարկվել են կատարվելիք աշխատանքների օբյեկտային լոկալ նախահաշիվները: Կազմվել է հավաք նախահաշիվ:

Կատարվելիք աշխատանքների արժեքները հետևյալ են.

| | |
|---|---|
| -ըստ Նախահաշվի | 58 329 900 ՀՀ դրամ |
| -ըստ ծավալաթերթի | 57 020 400 ՀՀ դրամ |

## Փորձագիտական եզրակացություն

Նախագիծն իրականացված է ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:

Նախահաշիվը կազմված է ,,Գործող գներով շինաշխատանքների գնահատման կարգի,, համաձայն, ծավալները հաշվարկված են նախագծին համապատասխան:

Նախագիծն ու նախահաշիվը կարող են սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատվել:

Փորձագիտական եզրակացությունը կազմված է համաձայն Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի, որը հաստատված է ՀՀ կառավարության 19 մարտի 2009թ. թիվ 596-Ն որոշմամբ :

Փորձագետ ճարտարագետ Ս. Մուրադյան

ՀՀ Քաղաքաշինության կոմիտե ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ- 17217